



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

---

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО  
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

## **СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ**

### **COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS**

#### **1.4 (30)**

##### **Общественные и гуманитарные науки**

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

##### **Humanities and Social Sciences**

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN  
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS  
2019

## ԵՊՀ ՌԻԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

### 1.4 (30)

#### **Հասարակական և հումանիտար գիտություններ**

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

**Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ**  
**Издаётся по решению Ученого совета ЕГУ**  
**Published by the Resolution of the Academic Council of YSU**

**Խմբագրական խորհուրդ՝**

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան  
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան  
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան  
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան  
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան  
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան  
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան  
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան  
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան  
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան  
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան  
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան  
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան  
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան  
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան  
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան  
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան  
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան  
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան  
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան  
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

**Редакционная коллегия:**

д.ф.н., проф. Д. Петросян  
д.ф.н., проф. Л. Матевосян  
д.ф.н., проф. Ю. Аветисян  
д.ф.н., проф. А. Мурадян  
д.ф.н., проф. В. Арутюнян  
д.п.н., проф. Г. Аванесян  
д.и.н., проф. С. Мкртчян  
д.э.н., проф. А. Мнацаканян  
д.э.н., проф. А. Саргсян  
д.п.н., проф. Г. Керян  
д.ф.н., доц. Ш. Паронян  
к.ф.н., доц. Н. Варданын  
к.ф.н., доц. В. Егиазарян  
к.э.н., доц. К. Хачатрян  
к.ф.н., ассист. Н. Погосян  
к.ю.н., ассист. В. Григорян  
к.ю.н., ассист. Т. Суджян  
к.ю.н., ассист. А. Тавадьян  
к.п.н., ассист. Д. Саргсян  
к.и.н., ассист. Р. Карапетын  
к.ф.н., ассист. К. Яралян

**Editorial Board**

DSc, Prof. D. Petrosyan  
DSc, Prof. L. Matevosyan  
DSc, Prof. Y. Avetisyan  
DSc, Prof. S. Muradyan  
DSc, Prof. V. Harutyunyan  
DSc, Prof. H. Avanesyan  
DSc, Prof. S. Mkrtchyan  
DSc, Prof. H. Mnatsakanyan  
DSc, Prof. H. Sargsyan  
DSc, Prof. T. Keryan  
DSc, Associate Prof. Sh. Paronyan  
DSc, Associate Prof. N. Vardanyan  
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan  
PhD, Associate Prof. K. Khachatryan  
PhD, Assistant Prof. N. Poghosyan  
PhD, Assistant Prof. V. Grigoryan  
PhD, Assistant Prof. T. Sujyan  
PhD, Assistant Prof. A. Tavadyan  
PhD, Assistant Prof. D. Sargsyan  
PhD, Assistant Prof. R. Karapetyan  
PhD, Assistant Prof. K. Yarlyan

ԵՊՀ, Իրավագիտության ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող  
Գիտական ղեկավար՝ ի.գ.դ., պրոֆ. Գ. Դանիելյան  
Էլ. փոստ՝ [zaven.vartumyan@gmail.com](mailto:zaven.vartumyan@gmail.com)

**ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Մեր ժամանակներում գենդերային հավասարության և գենդերային քաղաքականությանն առնչվող հարցադրումները համարժեք և միասնական չեն ընկալվում, ինչի համատեքստում բախվում ենք իրավակիրառ բազում խնդիրների, ինչն էլ պայմանավորել է սույն հետազոտության անհրաժեշտությունը:

Նախ հարկ է ներկայացնել «գենդեր» եզրույթի էությունը և այն համատեքստը, որում այն գործածվում է սույն հոդվածում: Ինչպես նշում է Ռիչարդ Ուդրին. *«Գենդերը կենսաբանական սեռի և վարքագծի հարաբերակցությունն է. գենդերային տեսությունը բացահայտում է այդ հարաբերակցությունը»*: Վերջինս նշում է նաև, որ գոյություն ունեն երկու հիմնական տեսություն՝ կենսաբանական և սոցիալական [1]: Համաձայն մեկ այլ սահմանման՝ գենդերը կանանց և տղամարդկանց սոցիալապես ձևավորված սահմանումն է: Դա սեռը չէ (կանանց և տղամարդկանց կենսաբանական հատկանիշները): Գենդերը սահմանվում է որպես հասարակությունում, հանրային և մասնավոր կյանքում կանանց և տղամարդկանց վերագրված խնդիրների, գործառույթների և դերերի հայեցակարգ [2]: Համամիտ լինելով այս սահմանումների հետ և կատարելով որոշակի ընդհանրացում՝ կարող ենք արձանագրել, որ միջազգային իրավական և սոցիոլոգիական գրականության մեջ, անգամ իրավական ակտերում «գենդեր» եզրույթը «սեռ» եզրույթի հոմանիշը չէ, քանի որ ունի սոցիալական բաղադրիչ և կապված է այն հարցադրման հետ, թե ինչպես է անձը իրեն ընկալում հասարակությունում: Սակայն, հաշվի առնելով Հայաստանի մշակութային համատեքստում գենդեր և սեռ եզրույթների տարբերակման ժամանակավրեպությունը և այս պահին հասարակության կողմից այդ տարբերությունն ու դրանից բխող հետևանքներն ընդունելու անպատրաստությունը, նպատակահարմար ենք գտնում սույն հոդվածում ներկայացնել «գենդեր» եզրույթը որպես բավականաչափ մոտ «սեռ» եզրույթին, իսկ գենդերային տարբերությունները բնորոշել որպես սեռերի միջև առկա սոցիալական և կենսաբանական տարբերությունների ամբողջություն:

Գենդերային հավասարության, ինչպես նաև կանանց ու տղամարդկանց իրավահավասարության հիմնախնդիրների լուծումը հատկապես 19-րդ դարավերջից կանանց ընտրական իրավունք վերապահելու գործընթացի մեկնարկից եղել և շարունակում է մնալ թե՛ երկրների ներպետական, թե՛ միջազգային իրավական հիմնական նպատակներից մեկը: 19-րդ դարից մինչ այսօր գենդերային հավասարության ոլորտում կատարվել է ծավալուն աշխատանք, սակայն այսօր էլ զարգացող մեծաթիվ

երկրներում, որոնց մշակութային համակարգերին մշտապես բնորոշ է եղել ընտանիքում և հասարակությունում տղամարդու իշխող դերը կամ նահապետական սովորույթներով պայմանավորված շեղումները, առկա են բազում հիմնախնդիրներ: Այդպիսի երկրների թվին կարող ենք դասել նաև Հայաստանը, որտեղ այդ առնչությամբ առկա հիմնախնդիրները նպատակահարմար ենք համարում քննության առնել սույն հոդվածում:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետությունում գենդերային հավասարությանը, նախ, կցանկանայինք ընդգծել առհասարակ «գենդերային իրավահավասարություն» և «գենդերային հավասարություն» եզրույթների տարբերությունների սահմանները և բացահայտել, թե ինչպես են ընկալվում այդ եզրերն ազգային օրենսդրությունում: Ինչպես նշում է Ն. Շվեդովան. «...գենդերային հավասարությունը հասարակության կողմից կանանց և տղամարդկանց միջև նմանությունների և տարբերությունների, նրանց զբաղեցրած տարբեր սոցիալական դերերի հավասարաչափ գնահատումն է» [3]: Համամիտ լինելով այս սահմանմանը, կարող ենք ասել, որ «գենդերային հավասարություն» եզրույթը ոչ այլ ինչ է, քան հասարակական գիտակցության և հասարակական մտքի արտացոլում. այն է՝ ինչպես է հասարակությունն իր համար սահմանում սեռերի փոխհարաբերության բնույթը:

Հասարակական գիտակցության և մտքի ձևավորումը մեծապես կապված է նաև սովորույթների և մշակույթի հետ՝ եվրոպական գենդերային էգալիտարիզմից մինչև ասիական մշակութային այնպիսի համակարգեր, որոնցում բացառվում է, որ կանանք և տղամարդիկ գտնվեն սոցիալական միատեսակ հարթության վրա: Հայաստանի Հանրապետության մասին խոսելիս նշենք, որ առկա է կանանց և տղամարդկանց սոցիալական, ինչպես նաև հասարակությունում զբաղեցրած դերի մասին պատկերացումների դրական տեղաշարժ, ինչը պայմանավորված է նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իգական սեռի մեծաթիվ ներկայացուցիչների առկայությամբ: Սակայն անհրաժեշտ է ընդգծել նաև, որ մեր մշակութային համատեքստում առկա են հասարակությունում կնոջ զբաղեցրած տեղի մասին կարծրացած մի շարք պատկերացումներ, որոնց պատճառով չենք կարող խոսել եվրոպական գենդերային էգալիտարիզմի հետ անգամ մոտ հարթության վրա գտնվելու մասին: Ինչ վերաբերում է «գենդերային հավասարություն» և «գենդերային իրավահավասարություն» եզրույթների հարաբերակցությանը, ապա նշենք, որ ի տարբերություն «գենդերային հավասարություն» եզրույթի, «գենդերային իրավահավասարություն» եզրն արդեն կարող ենք բնորոշել որպես հասարակության մեջ սեռերի փոխհարաբերության կառուցման սկզբունք՝ սահմանված պետության կողմից: Բացի այդ, «գենդերային իրավահավասարություն» եզրույթն իմաստով ավելի նեղ է, քան «գենդերային հավասարություն»-ը:

Այժմ ներկայացնենք վերոհիշյալ եզրույթների օրենսդրական հիմքերը և դրանց վերլուծությանը: Համաձայն «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին

մասի 9-րդ կետի՝ «գենդերային հավասարություն» եզրույթի ներքո հասկանում ենք կանանց և տղամարդկանց իրավական հավասար կարգավիճակ և դրա իրականացման համար հավասար հնարավորություններ, որոնք ընձեռվում անձանց՝ անկախ սեռից ազատորեն օգտագործելու իրենց ունակությունները քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում մասնակցություն ունենալու համար: «Գենդերային իրավահավասարություն» եզրույթը համաձայն նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝ օրենքի առաջ կանանց և տղամարդկանց իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության հավասարությունն է՝ օրենքով սահմանված բացառությունների հաշվառմամբ: «Գենդերային իրավահավասարություն» եզրույթի օրենսդրական սահմանմանն առնչվող հարցեր չեն առաջանում՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշվում է օրենքով սահմանված բացառությունների հնարավորությունը, քանի որ կանանց և տղամարդկանց միջև օբյեկտիվորեն առկա տարբերությունները մի շարք դեպքերում պահանջում են իրավունքների, ազատությունների և հատկապես պարտականությունների տարբեր ծավալների սահմանում: Ինչ վերաբերում է «գենդերային հավասարություն» եզրույթի օրենսդրական սահմանմանը, ապա առկա են որոշակի խնդիրներ: Փաստորեն, հասկացության օրենսդրական սահմանումը «գենդերային հավասարություն» և «գենդերային իրավահավասարություն» եզրույթների հարաբերակցության համատեքստում «գենդերային հավասարություն» եզրույթն առավել լայն է ճանաչում միայն այնքանով, որքանով այն բովանդակում է նաև իրավունքների և ազատությունների իրականացման հավասար հնարավորությունների սահմանում: Կարծում ենք, որ նման սահմանումը չափազանց նեղ է, և այն առավել համապատասխանում է հենց կանանց և տղամարդկանց համար իրավունքների և ազատությունների իրացման հավասար հնարավորությունների ամրագրում հասկացությանը, բայց ոչ «գենդերային հավասարություն» եզրույթին, որը չափազանց լայն է:

Անդրադառնանք նաև «գենդերային խտրականություն» եզրույթի օրենսդրական հիմքերին՝ հետազայում իրավական մի շարք ակտերում պարունակվող դրույթները գենդերային խտրականություն որակելու անհրաժեշտության համատեքստում: Համաձայն «Կանանց և տղամարդկանց իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ գենդերային խտրականությունը լինում է ուղղակի և անուղղակի: Այն սահմանվում է որպես սեռի հատկանիշով անձանց իրավունքներն ու շահերը սահմանափակող ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որն ուղղված է կամ հանգեցնում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության ճանաչման, օգտագործման կամ իրականացման սահմանափակման կամ վերացման:

Համեմատական անցկացնենք սույն բնորոշման և միջազգային իրավական ակտերում ամրագրված, ինչպես նաև տեսական որոշ սահմանումների հետ: Առաջին հերթին նշենք «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման

մասին» կոնվենցիայում առկա սահմանումը: Համաձայն վերոնշյալ կոնվենցիայի 1-ին մասի 1-ին հոդվածի՝ Կոնվենցիայի նպատակների համար «կանանց նկատմամբ խտրականություն» հասկացությունը նշանակում է սեռի հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում տղամարդկանց և կանանց՝ անկախ ամուսնական կարգավիճակից, հավասարության հիմքով, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը կամ դրանցից օգտվելը [4]: Որոշակի համեմատական անցկացնելով վերոնշյալ սահմանումների միջև, կարող ենք արձանագրել դրանց հիմնական տարբերությունը. «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը խտրականությունը սահմանում է սոսկ որպես իրավունքներն ու շահերը սահմանափակող տարբերակում, բացառում կամ նախապատվություն, մինչդեռ Կոնվենցիան խտրականությունը սահմանում է որպես ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում: Իբրև գենդերային խտրականություն եզրույթի տեսական մեկնաբանություն, Ա. Մաքսիմովը նշում է. «...խտրականությունը բացարձակ արտահայտությամբ ունի երկու հիմնական ձև՝ ֆորմալ և նյութական: Ֆորմալ խտրականություն ասելով հասկանում ենք պետության կամ հասարակության կողմից որոշակի կարեգործիայի մարդկանց իրավունքների և(կամ) ազատությունների սահմանափակում, ինչը կարող է լինել թե՛ օրենսդրորեն ամրագրված, թե՛ սահմանված հասարակության սովորույթներով: Նյութական խտրականություն ասելով հասկանում ենք մարդկանց իրավունքների սահմանափակմանն ուղղված կոնկրետ գործողություններ՝ դրա համար ձևականորեն սահմանված հիմքերի բացակայության պարագայում» [5]: Եթե երկրորդն ակնհայտ իրավախախտում է և վերլուծության ու համեմատության համար այդքան էլ հետաքրքրական չէ, ապա ֆորմալ խտրականության սահմանման մեջ ուշադրություն պետք է դարձնենք հատկապես այն հանգամանքին, որ սահմանափակումը կարող է սահմանվել նաև հասարակության սովորույթներով: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ազգային օրենսդրական սահմանման հիմնական տարբերությունը կոնվենցիայի սահմանումից և վերոնշյալ տեսական մեկնաբանությունից այն է, որ կոնվենցիան և մեկնաբանությունը բովանդակում են «խտրականություն»: Հետևաբար, «գենդերային խտրականություն» եզրույթն առավել լայն ծավալ ունի, քան ազգային օրենսդրությունը: Վերջինս, խտրականությունը բնորոշելով որպես իրավունքները և շահերը սահմանափակող ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, խնդիրը տեղափոխում է բացառապես իրավական ոլորտ, մինչդեռ ոչ պակաս կարևոր է գենդերային խտրականության բացառումը և դրա դեմ պայքարը նաև հասարակական կյանքի այնպիսի ոլորտներում, որոնք ամբողջովին չեն կարգավորվում իրավական նորմերով: Կարևոր է նաև հասարակության գիտակցության մեջ փոփոխությունների կատարելու անհրաժեշտությունը,



ինչն առավել լայն և ընգրկուն է, քան իրավական նորմերում առկա կարգավորումները:

Հաշվի առնելով վերոնշյալը, անհրաժեշտ ենք համարում փոփոխություն կատարել «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում՝ «գենդերային խտրականություն» եզրույթը սահմանելով որպես **«ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որն ուղղված է կամ հանգեցնում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության ճանաչման, օգտագործման կամ իրականացման սահմանափակման կամ վերացման»**, այլ ոչ միայն շահերի կամ իրավունքների սահմանափակում: Այս դեպքում խտրականության վերացմանն ուղղված քայլերն ու միջոցառումներն արդյունավետ կլինեն ոչ միայն իրավական բարեփոխումներ իրականացնելու և սույն ոլորտի կարգավորման համար ամուր իրավական հիմք ստեղծելու, այլև հասարակական կարծիքի և գիտակցության մեջ փոփոխություններ կատարելու համատեքստում:

Առկա է դիտարկում նաև՝ կապված նույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի հետ, ըստ որի՝ կանանց և տղամարդկանց հարաբերությունների կարգավորման հարցերում տարբերությունների սահմանումը խտրականություն չէ՝ պայմանավորված հղիությամբ և ծննդաբերությամբ, երեխայի խնամքով և կրծքով կերակրելով: Կարծում ենք, որ ձևակերպումն այնքան էլ հաջող չէ, քանի որ ըստ վերոնշյալ սահմանման՝ ստացվում է, որ կարգավորվող հարաբերությունների սուբյեկտ կարող են լինել միայն մի կողմից կինը, մյուս կողմից՝ տղամարդը, մինչդեռ հնարավոր է իրավիճակ, երբ նմանօրինակ հարաբերության սուբյեկտ լինեն իգական սեռի երկու ներկայացուցիչ, կամ էլ մի կողմից իգական և արական սեռի ներկայացուցիչներ, որոնց հետ հարաբերություններում կսահմանվեն խտրականություն չհանդիսացող տարբերություններ, մյուս կողմից՝ իգական կամ արական սեռի ներկայացուցիչ կամ ներկայացուցիչներ: Հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ ենք համարում փոփոխություն կատարել օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 1 կետում՝ վերաձևակերպելով հետևյալ կերպ. **«կանանց և տղամարդկանց հետ հարաբերությունների կարգավորման հարցերում տարբերությունների սահմանումը՝ պայմանավորված հղիությամբ և ծննդաբերությամբ, երեխայի խնամքով և կրծքով կերակրելով»:**

Գենդերային հավասարության հիմնախնդիրներին առնչվող դրույթներ է պարունակում նաև ՀՀ հիմնական օրենքը՝ սահմանադրությունը: Համաձայն ՀՀ սահմանադրության 30-րդ հոդվածի՝ կանայք և տղամարդիկ իրավահավասար են: Հաշվի առնելով ազգային օրենսդրությունում այնպիսի դրույթներ, ինչպիսիք են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասը, որը պարտադիր զինվորական ծառայության պարտականություն է սահմանում արական սեռի ներկայացուցիչների համար, ՀՀ քաղաքացիական

օրենսգրքի 1081-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, որի համաձայն կանանց համար տուժողի (կերակրողի) մահվան դեպքում ցմահ փոխհատուցման իրավունքը առաջացանում է 55 տարեկանից, իսկ տղամարդկանց համար՝ 60, ինչպես նաև մի շարք այլ նորմերի առկայությունը, որոնք կանանց և տղամարդկանց համար համապատասխան հիմքերի առկայությամբ կամ դրանց բացակայությամբ սահմանում են իրավունքների կամ պարտականությունների ոչ հավասար ծավալ, կարծում ենք, որ ՀՀ սահմանադրության 30-րդ հոդվածը պետք է սահմանի օրենքով նախատեսված դեպքերում կանանց և տղամարդկանց իրավունքների և պարտավորությունների ոչ հավասար բաշխման և բացառությունների հնարավորություն: Սա անհրաժեշտ ենք համարում նաև կանանց և տղամարդկանց միջև բացարձակ իրավահավասարության անհնարինության և աննպատակահարմարության համատեքստում: Ճիշտ է, «Կանանց և տղամարդկանց իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը սահմանում է բացառությունների հնարավորությունը, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավունքների տարբեր ծավալ նախատեսող դրույթ է պարունակում այնպիսի կարևորություն ունեցող նորմատիվ իրավական ակտ, ինչպիսին է ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, բացառությունների սահմանման հնարավորությունն անհրաժեշտ ենք համարում ամրագրել հենց հիմնական օրենքում:

Սահմանադրության՝ առանց բացառությունների սահմանման հնարավորության 30-րդ հոդվածը որոշակի հակասության մեջ է մտնում սահմանադրության 86-րդ հոդվածի հոդվածի հետ, ըստ որի՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներից է նաև կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը: «Փաստացի հավասարություն» եզրույթը իմաստային առումով արտացոլում է ոչ թե «իրավահավասարություն», այլ «սոցիալական հավասարություն» եզրույթի բովանդակությունը: Այս դեպքում հակադրություն կա «իրավահավասարություն» և «փաստացի հավասարություն» եզրույթների և դրանց բովանդակություն միջև: Կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության ապահովման համար մի շարք դեպքերում կանանց և տղամարդկանց միջև շեղումներ են անհրաժեշտ իրավահավասարության սկզբունքից: Որպես օրինակ բերենք ընտրական օրենսգիրքը: Համաձայն «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 83-րդ հոդվածի՝ կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի համապետական ընտրական ցուցակի առաջին մասում առաջին համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով եռյակներում (1-3, 1-6, 1-9 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70 տոկոսը: Նման դրույթը հակասում է սեռերի միջև

բացարձակ իրավահավասարյան<sup>1</sup> սկզբունքին, սակայն դրա գոյությունն օբյեկտիվորեն անհրաժեշտ է, քանզի դրա և նմանօրինակ այլ դրույթների բացակայության պարագայում խստ սակավ կլիներ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց թվաքանակը՝ պայամանավորված հայ կականց՝ քաղաքականությանը և առհասարակ հանրային գործունեությանն առնչվող հասարակական և մշակութային ըմբռնումների և կարծրատիպերի համատեքստում: Վերոնշյալ հանգամանքները ևս մեկ անգամ հաստատում են, որ սահմանադրության 30-րդ հոդվածում անհրաժեշտ է փոփոխություն կատարել:

Որպես խտրականության օրինակ անդրադառնանք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1081-րդ հոդվածին (կերակրողի մահվան հետևանքով վնաս կրած անձանց վնասը հատուցելը): Համաձայն այս հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝ վնասը հատուցվում է 55 տարեկանից մեծ կանանց և ցմահ՝ 60 տարեկանից մեծ տղամարդկանց: Հարց է առաջանում, թե օբյեկտիվ ինչ հանգամանք կարող է հիմք ծառայել նման դրույթի սահմանման համար: Այդպիսին կարող էր լինել Հայաստանում կյանքի միջին տևողության տարբերությունը սեռերի միջև հոգուտ տղամարդկանց, սակայն 2015 թվականին Հայաստանի Հանրապետությունում կյանքի միջին տևողությունը տղամարդկանց համար կազմել է 71.6, իսկ կանանց համար՝ 77.7 տարի [6]: Նշենք նաև, որ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տարիքային աշխատանքային կենսաթոշակը թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց համար սահմանվում է 63 տարեկանից և առկա չէ կենսաթոշակային տարբեր տարիքներով պայմանավորված օբյեկտիվ անհրաժեշտություն: Կարծում ենք, որ վերոհիշյալ դրույթի ամրագրման համար հիմք է հանդիսացել համապատասխան տարիքային խմբում (65-75 տարեկան) կանանց և տղամարդկանց աշխատունակությունը և սույն տարիքային խմբում տնտեսապես ակտիվ և ոչ ակտիվ բնակչության հարաբերակցությունն ըստ սեռերի: Սույն գործոնի ուսումնասիրման և դրանով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1081-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի բովանդակության հիմնավորումը խտրականություն որակելու համատեքստում անհրաժեշտ ենք համարում ուսումնասիրել վիճակագրությունը [7]: Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2016 թվականին Հայաստանում տնտեսապես ակտիվ բնակչությունը 65-75 տարեկանների տարիքային խմբում կանանց համար կազմում է 26.6 %, տղամարդկանց համար՝ 45 %: Առաջին հայացքից կարող է թվալ, թե, հաշվի առնելով սույն հանգամանքը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ դրույթը պայմանավորված է օբյեկտիվ հիմքերով, սակայն կցանկանանք քննարկել նաև, թե ինչ հիմքերով է պայմանավորված նշված տարիքային խմբում սույն սեռային խզվածքը, և արդյոք այդ հիմքերով օրենսգրքի վերոնշյալ դրույթի հիմնավորումը

<sup>1</sup> Սույն հոդվածի նպատակների համար «կանանց և տղամարդկանց միջև բացարձակ իրավահավասարություն» եզրույթի ներքո հասկանում ենք ՀՀ սահմանադրության 30-րդ հոդվածում բովանդակված նորմը՝ բացառություններ սահմանելու հնարավորություն պարունակող դրույթի բացակայության պարագայում:

գենդերային խտրականություն չէ: Նույն վիճակագրությամբ ուսումնասիրելով նաև տնտեսապես ոչ ակտիվ բնակչության հետ կապված տվյալները՝ նկատում ենք, որ կանանց պարագայում տնտեսապես ոչ ակտիվ բնակչության 48 %-ը տնային տնտեսվարող է: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ուսումնասիրվող տարիքային խմբում կանանց մոտ հիմնականում բացակայում են տնտեսապես ոչ ակտիվ բնակչության կազմում ընդգրկվելու համար անհրաժեշտ կենսաբանական գործոնները (ծննդաբերություն, երեխային կրծքով կերակրել և այլն), կարող ենք արձանագրել, որ ուսումնասիրվող տարիքային խմբում կանանց՝ տնտեսապես ոչ ակտիվ բնակչության կազմում գտնվելու հանգամանքն առավելապես պայմանավորված է կնոջ՝ հասարակության մեջ զբաղեցրած դերի մասին կարծրատիպերով և տնային տնտեսությունը վարելու անհրաժեշտությամբ: Կարծում ենք, որ նմանօրինակ հիմքով տարբերակումը խտրականություն է, քանի որ պայմանավորված չէ հղիությամբ, ծննդաբերությամբ, երեխայի խնամքով կամ կրծքով կերակրելով, վերարտադրողական առողջության պահպանմամբ, կենսաբանական որևէ այլ առանձնահատկությամբ կամ այնպիսի հիմքով, որը սահմանված է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքով: Հաշվի առնելով վերոնշյալը, անհրաժեշտ ենք համարում փոփոխություն կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1081-րդ հոդվածի 2-րդ 3-րդ կետում, և կանանց ու տղամարդկանց համար տուժողի (կերակրողի) մահվան դեպքում վնասի ցմահ հատուցման իրավունքի ծագման համար սահմանել նույն տարիքը:

Կցանկանանք անդրադառնալ նաև «Ձեռքի մասին» օրենքի 24-րդ հոդվածին (ՀՀ քաղաքացիների կողմից զենք գործադրելը): Համաձայն սույն հոդվածի՝ արգելվում է հրազեն գործադրել կանանց, հաշմանդամության ակնհայտ նշաններ ունեցող անձանց և անչափահասների նկատմամբ, եթե վերջիններիս տարիքն ակնհայտ է կամ հայտնի է հրազեն գործադրողին՝ բացառությամբ նրանց կողմից զինված կամ խմբակային հարձակման կամ զինված դիմադրության դեպքերի, ինչպես նաև մարդկանց զգալի կուտակումների ժամանակ, երբ հրազենի գործադրումից կարող են տուժել այլ անձինք: Հարց է առաջանում, թե որն է կանանց նկատմամբ հրազեն գործադրելու արգելքի անհրաժեշտությունը պայմանավորող օբյեկտիվ հիմքը: Կարող ենք ենթադրել, որ հիմք կարող է լինել դեպքերի մեծամասնությունում կանանց՝ ֆիզիկապես տղամարդկանցից առավել թույլ լինելու հանգամանքը, սակայն զենք գործադրողը կարող է լինել նաև իգական սեռի ներկայացուցիչ, և տվյալ դեպքում խոսք չի կարող լինել վերոնշյալ հանգամանքի մասին: Կարող է հարց առաջանալ նաև՝ կապված կանանց վերարտադրողական առողջության հետ: Պետք է նշենք, որ հրազենը Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով հիմնականում գործադրվում է ոստիկանական մարմինների ծառայողների կողմից, իսկ տվյալ պարագայում խնդիրն արդեն կապված է ոչ թե վերարտադրողական արտադրության, այլ Հայաստանում ոստիկանական մարմինների ծառայողների հրազենի գործադրմանն առնչվող ոչ բավարար չափով պատրաստվածությանը և պարբերական

պրակտիկայի բացակայությանը, որը մեր օրերում կարող է իրագործվել տեխնոլոգիական զարգացումների համատեքստում: Հաշվի առնելով վերոգրյալը, կարծում ենք, որ «Ձեռքի մասին» օրենքի 24-րդ հոդվածը պետք է փոփոխվի և բացառվի բովանդակված արգելքը՝ կապված կանանց նկատմամբ հրազեն գործադրելու հետ:

Քննարկելով գենդերային հավասարության հետ կապված օրենսդրական խնդիրները, կցանկանանք անդրադառնալ նաև վերահսկողության և մշտադիտարկմանն առնչվող հիմնախնդրի: Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի 2016 և 2017 թթ. տարեկան հաղորդումները ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին՝ կարող ենք նկատել, որ երկու հաղորդումներն էլ բացարձակապես նույն վիճակագրական տվյալներն են պարունակում՝ կապված կնոջ նկատմամբ բռնություն գործադրելու կարծրատիպային մոտեցումների հետ: Ըստ էության, չի նկատվել որևէ փոփոխություն [8], ինչն անընդունելի ենք համարում տվյալ խնդրի մշտադիտարկման անհրաժեշտության պարագայում:

Վերոգրյալը թույլ է տալիս արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում գենդերային հավասարության հարցում առկա են թե՛ օրենսդրական, և թե՛ մշտադիտարկման ու վերահսկողության զգալի խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ է և՛ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, և՛ քաղաքացիական հասարակության անդամների նպատակաուղղված և ներդաշնակ գործունեությունը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] **Richard Udry J.**, The nature of gender, November 1994, pp. 561-3.
- [2] Swiss Agency for Development and Cooperation, Gender in practice.
- [3] **Шведова Н. А.**, Гендерное просвещение: просто о сложном, 2002, 212 с.
- [4] Convention on the elimination of all forms of discrimination against women, Article 1, UN General Assembly, 1979.
- [5] **Максимов А. А.**, Теоретические проблемы определения и соотношения гендерного насилия и гендерной дискриминации, 2012, 119 с.
- [6] World Health Organisation, Life expectancy and Healthy life expectancy Data by country, 2016.
- [7] ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, «Հայաստանի կանայք և տղամարդիկ 2017»:
- [8] ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդում 2016 թ. ընթացքում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին, Երևան 2017, էջ 247: ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդում 2017 թ. ընթացքում ՀՀ

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին, Երևան 2018, էջ 311-2:

Վարտումյան Զավեն

## **ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Բանալի բառեր՝** գենդեր, գենդերային հավասարություն, գենդերային իրավահավասարություն, գենդերային խտրականություն, սեռ, կին, տղամարդ:

Հոդվածում քննարկվում են գենդերային հավասարության արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Անդրադարձ է կատարվում գենդերային հավասարության օրենսդրական հիմքերին, դրանցում առկա հասկացությունների և ձևակերպումների համապատասխանությանը միջազգային իրավական փաստաթղթերին և դոկտրինալ մեկնաբանություններին, տարբերակումների սահմանման համար օբյեկտիվորեն անհրաժեշտ հիմքերի առկայության հիմնախնդիրներին, իրավական ակտերում առկա խտրականության դրսևորումներին, մշտադիտարկմանն ու վերահսկողության առնչվող խնդիրներին:

Вартумян Завен

## **СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ГЕНДЕРНОГО РАВЕНСТВА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

**Ключевые слова:** гендер, гендерное равенство, гендерное равноправие, гендерная дискриминация, пол, женщина, мужчина.

В данной статье рассматриваются современные проблемы гендерного равенства в Республике Армения. Мы обратили внимание на законодательные основы гендерного равенства, соответствие концепций и формулировок, присутствующих в них, с международными правовыми актами и доктринальными интерпретациями, проблемы наличия объективно необходимых основ для установления дифференциаций, проявление дискриминации в правовых актах, проблемы мониторинга и надзора.

**MODERN ISSUES OF GENDER EQUALITY IN THE REPUBLIC OF ARMENIA**

**Key words:** gender, gender equality, gender equal rights, gender discrimination, sex, woman, man.

Modern issues of gender equality in the Republic of Armenia are discussed in this article. The legislative basis of gender equality, correspondence of the concepts and formulations to international legal documents and doctrinal interpretations, problems of the existence of objectively necessary basis for the establishment of differentiations, discriminations in legal acts, monitoring and oversight issues are touched upon.